«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

1401,Ք.Մարտունի Մ.Հերացի 10 **Հեռ. +37494605004**

N-67
«05» սեպտեմբեր 2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
պարոն Կ. Սարգսյանին

Մեծարգո մարզպետ
Տեղեկացնում եմ Ձեզ , որ « Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար Հասմիկ Ասպատուրյանը 01.09.2023թ. ազատվել է աշխատանքից:
Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի թիվ 396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի» 9-րդ կետի պահանջներով՝ հայտնում եմ Ձեզ , որ «Դասվար»-ի թափուր տեղերը զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ, որը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 22 –ին, ժամը 14:00-ին:
Առդիր՝ էլեկտրոնային նյութ::

X

Խանում Ղազարյան
Տնօրեն

Դպրոցի տնօրեն՝ /Խ.Ղազարյան/

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Դասվար»- 18 դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 18 -- ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. սեպտեմբերի 22- ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մ. Հերացի 10:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 51 34 31 հեռախոսահամարով: